ՌԱՖԱԵՈՒԼ
ԲՈԼՈՐՋՅԱՆ

Սիրուն կապիկը

ԳԱՍՊԱՐ
ԲՈԼՈՐՋՅԱՆ

Վերջ հանդիպման

«ՀԱՅԱՍՏԱՆ»
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1975

Ա 141/24

Ар 2
Բ 81

Բ $\frac{70403\ (989)}{701\ (01)\ 75}$. 137.75.«Տ»

Թաթուլ Բոլորչյանը ընթերցողին հայտնի է «Արևի մտերմություն» և «Կիսված գիշեր» ժողովածուներով։ Ներկա ժողովածուում ամփոփված են հեղինակի վերջին տարիների խոհական, հայրենասիրական և սիրային բանաստեղծությունները։

© «Հայաստան» հրատարակչություն, 1975

ԿՈՄԻՏԱՍ

1

Գամ տքնությանդ պարիսպներին նորեն,
Բոկոտն գամ
Պատարագեն վերևում,
Աղավնիներ վայրի,
Երգեն, որ քեզ չմոռանամ:
Քո բառերով բացվեմ,
Քո բառերով փակվեմ,
Հաշվեմ քո երկունքի հին խազերը, հաշվեմ,
Առասպելվեմ նորից,
Ու խորանամ՝
Շրջեմ քո մեջ որպես գինովացած պատրանք,
Թե քնանամ հանկարծ,
Ինձ արթնացնես:

2

Դու իմ ճանապարհին
Ճակատագիր եղար,
Ես գլուխս խոնարհ ցած արի քո առաջ,
Եվ քո խոսքերի պես
Անձրևը հորդ եղավ,
Ավազաններն իրար համբուրեցին:
Իմ ձորերի նման
Դու խորունկ մնացիր
Եվ քո կածաններում
Ես ինձ գտա:
Առանց քեզ այդ երգը ես ինչպես գտնեի,
Եվ մտքերիս բեռը ինչպես թեթևանար:
Եվ կանգնել եմ օրվա ուղիղ կեսին,
Բոկոտն եմ կանգնել
Բարձունքներիդ առաջ,
Իմ հավերժող երգ,
Իմ նոր ծնունդ: